

- 107 Նոյն Մանուէլ զերթ իմաստակ
Յանդրգնեալ էր երբեմն անյագ,
Գրբել բարուր, նախատ, ծանակ
Մըխթարեանց գրրոց գիտակ:
- 108 Իսկ գիպեալ նա սերտ սուր գրրչի
Ճոռոմաբան հայր Մըկրտչի
Խոցիւր ի սիրտ ըստ գիշատչի,
Որ ընդ վըզի զինու հատչի:
- 109 Ապա զուր գործ նոյն խելառի
Հաստէր ըզհին բանն առակի,
Թէ շամբուչ է որ ներհակի
Ընգ վեհս քան զինքն յամենայնի:
- 110 Արդ յետ որոյ Սարգիս ի զատ
Նըստէր վըստահ, հանգիստ է՝ ազատ
Ի ժամատան՝ որ ի Պալատ,
Տալով Ազգին քարոզ, խրրատ:
- 111 Յայնրմ՝ վայրի հայր իմ եւ տէր
Մեծաւ ջանիւ աշակերտէր
Ըզհոգեւոր որդեակնս, որ էր
Քաղցր Յարութիւնն ուսումնասէր:
- 112 Որ մականուամբ կոչիւր Պետան,
Եւ ըստ այլոց իսկ Պետանեան,
Թէպէտ ըստ իս յար պիտեւան,
Սիրուն եղբայր եւ պատուական:
- 113 Որ եւ որդի էր նագելի
Բարեպաշտոն Յօհաննիսի
Տամբ եւ թաղիւ Սամաթի՞ացի
Ի կօստանդեան մեծի Պօլսի: